ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 49 (24602), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۶۰۲) ۴۹ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

4 ՄԱՐՏԻ 2024

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

دوشنبه – ۱۴ اسفند ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ

Մեծարգոյ պարոնայք՝ Գեղարդ Մանսուրեան եւ Արա Շահվերդեան, Իրանի Իսլամական խորհրդարանի նորընտիր պատգամաւորներ

Սպահանի հայոց թեմի ժողովականութեան, համայնքի անդամների եւ անձամբ իմ անունից անկեղծօրէն շնորհաւորում եմ Ձեզ Իրանի Իսլամական խորհրդարանի իրանահայութեան պատգամաւոր ընտրուելու կապակցութեամբ:

Համոզուած եմ, որ Դուք Ձեր գիտելիքներով եւ ունակութիւններով յաջողութեամբ լուծելու էք համայնքային, իրանական հայրենիքի շահերի պաշտպանման եւ Իրան-Հայաստան կապերի ամրապնդման ու խորացման ուղղութեամբ Ձեր առջեւ դրուած խնդիրները:

Մաղթում եմ Ձեզ քաջառողջութիւն եւ յաջողութիւն Ձեր ստանձնած ծանր պարտականութիւնների կատարման գործում:

Սիփան եպս. Քէչէճեան
Սպահանի հայոց թեմի առաջնորդ
3 մարտի 2024

Խօսք երախտագիտութեան



Այսու մեր գոհունակութեան եւ երախտագիտութեան խօսքն ենք յայտնում Թեհրանի հայ համայնքի սիրելի ժողովրդին, Իսլամական խորհրդարանի 12-րդ գումարման եւ Առաջնորդութեան բանիմացների խորհրդի 6-րդ գումարման ընտրութիւններին խուռներամ մասնակցութեան համար:

Բարձր ենք գնահատում ձեր նախանձախնդրութիւնը՝ ազգային-քաղաքացիական պարտականութիւնը կատարելու ուղղութեամբ, որով կրկին ապացուցեցիք, որ իրանահայութիւնը օրինակելի քաղաքացին է հզօր Իրանի:

Թ. Հ. Թ.
ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Պաշտօնական.

ՆԳՆ ԿԸՅ-Ն ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՐԱ ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԵՒ ԳԵՂԱՐԴ ՄԱՆՍՈՒՐԵԱՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

«ԱԼԻՔ» - Ներքին գործերի նախարարութեան Կենտրոնական ընտրական յանձնաժողովը հրապարակեց 12-րդ գումարման Իսլամական խորհրդարանի ընտրութիւններում կրօնական փոքրամասնութիւնների ընտրութիւնների պաշտօնական արդիւնքները:

Ըստ դրանց՝ Թեհրանի եւ Իրանի հիւսիսային շրջանի իրանահայութեան պատգամաւոր ընտրուած Արա Շահվերդեանը 6078 վաւեր քւէներից ստացել է 5058 ձայն (83.21%), իսկ Սպահանի եւ Իրանի հարաւային շրջանի իրանահայութեան պատգամաւոր ընտրուած Գեղարդ Մանսուրեանը 1378 վաւեր քւէներից ստացել է 1035 ձայն (75.10%):

Զրադաշտների պատգամաւոր է ընտրուել Բեհշիդ Բարխորդարը, որը 1819 վաւեր քւէներից ստացել է 1021 ձայն (56.12%): Հրեաների պատգամաւոր է ընտրուել Հոմայուն Սամէ Եհ Նաջաֆաբադին, որը 2626 վաւեր քւէներից ստացել է 1406 ձայն (53.54%), իսկ ատրիների եւ քաղդէականների պատգամաւոր է ընտրուել Շաուլի Էնիէ Թեքիէն, որը 2375 վաւեր քւէներից ստացել է 2268 ձայն (95.49%):

Հայաստանի ո՞ր գիւղերի տարածքներն են վերահսկում ադրբեջանական զինուած ուժերը

Sputnik Արմենիայի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ վարչապետի աշխատակազմը պարզաբանել է, թէ որ գիւղերի տարածքներն են այս կամ այն կերպ վերահսկում Ադրբեջանի ԶՈՒ-ի կողմից, ինչպէս աւելի վաղ ասել էր Նիկոլ Փաշինեանը:

ՀՀ վարչապետը կառավարութեան նիստերից մէկում նշել էր, որ 31 ոչ անկլաւ գիւղերի կենսական տարածքները գտնւում են ադրբեջանական օկուպացիայի տակ, սակայն Բաքուն հրաժարւում է ճանաչել օկուպացիայի փաստը:

Կառավարութիւնից յայտնում են, որ այս գիւղերից օկուպացրած տարածքը կազմում է 170 քառ. կմ.:

Իրանական փորձագիտական շրջանակներ.

«Բաքուն յաւակնում է դառնալ «Մոնաֆեղին»-ի նոր որջը»

Ալբանիան ու Ադրբեջանը վիզաների ռեժիմի չեղարկման մասին յայտարարութիւն են տարածել

«ԱԼԻՔ» - Ալբանիայի վարչապետ Էդի Ռաման շաբաթ, պաշտօնական այցով ժամանել էր Բաքու:

Այցի ընթացքում կողմերը համաձայնուել են չեղարկել վիզաների ռեժիմը:

Այցի կարեւորութիւնը Բաքւի հարեւան երկրների համար կայանում է նրանում, որ Իրանի ժողովրդի երդուեալ թշնամի՝ «Մոնաֆեղին» ահաբեկչական յանցախումբը հնարաւորութիւն կը ստանայ անարգել մուտք գործել տարածաշրջան:

Բաքւի այս քայլը նաեւ իրանական փորձագիտական շրջանակների ուշադրութեանն է արժանացել, որոնց կարծիքով Տիրանայի «Աշրաֆ 3» անւամբ ճանաչուած ճամբարը կարող է անաղմուկ տեղափոխուել տարածաշրջան, նոյնիսկ հաստատուել Արցախի գրաւեալ տարածքներում:

(Շար. 8-րդ էջում)

«Յիսուն տարի շարունակ հրացանը ձեռքիս շրջել եմ մեր լեռնոտ ու քարքարոտ երկրում, սիրել եմ նրան իր հմայիչ եւ իր բոլոր ծուռումուռ կողմերով, եւ քայլ առ քայլ ծանօթացել եմ նրան: Եւ մէկը միւսի յետեւից բացել է նա իր գաղտնիքներն ինձ, որովհետեւ զգացել է, որ իր հարազատ որդին եմ, իր անբաժան մասը»

Վախթանգ Անանեան (1905-1980), հայ անւանի գրող, որսորդական պատմւածքների սկզբնաւորողը հայ գրականութեան մէջ

Մարտի 4-ը նրա յիշատակի օրն է

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Մարտի 3-ին Չարենցաւանում ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի անդամները եւ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորները հանդիպել են քաղաքացիների հետ

Մարտի 3-ին «Հայաստան» խմբակցութեան գործընկերների հետ Չարենցաւանում հանդիպել ենք մեր հայրենակիցներին, քննարկել առաջիկայ հնարաւոր զարգացումները, դրանց միասնական ուժերով դիմագրաւելու անհրաժեշտութիւնը, լսել հայրենակիցների տեսակէտները, պատասխանել նրանց յուզող բազմաթիւ հարցերի: Այս մասին գրել է ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթելեանը:

«Այս ձեւաչափով հանդիպումները կրելու են պարբերական բնոյթ»,- նշել է նա:

Արման Թաթոյեան.

«Ներքին Հանդը 3 կողմից շրջապատուած է ադրբեջանական 2 տասնեակից աւելի դիրքով. պատկերացնո՞ւմ էք մարդկանց վիճակը»

Ադրբեջանական զինծառայողները ներկայ լինելով թէ՛ մեր բնակավայրերի հարեւանութեամբ, թէ՛ ճանապարհներին՝ ամբողջութեամբ անհնարինութեան են վերածել մարդկանց կեանքը: Այս մասին News.am-ի հետ զրոյցում ասել է ՀՀ նախկին ՄԻՊ, «Թաթոյեան» հիմնադրամի ղեկավար Արման Թաթոյեանը:

«Ադրբեջանական զինուած ծառայողներն անօրինական տեղակայումներ ունեն մեր համայնքների անմիջական հարեւանութեամբ եւ համայնքներն իրար կապող ճանապարհներին: Այդ անօրինական, յանցաւոր տեղակայումները 2 տեսակի են. տեղակայումներ, որոնք Հայաստանի Հանրապետութեան անմիջական սահմանից ներս են եւ դրանք օկուպացուած տարածքներն են, այնտեղ իրականացնում է նաեւ ամրացման շարունակական աշխատանքներ, եւ կան հատուածներ, որոնք չեն գտնւում ՀՀ ինքնիշխան տարածքի մէջ, բայց քանի որ բնակավայրերի հարեւանութեամբ են եւ ադրբեջանական զինծառայողների սպառնալիքներով ու վերահսկողութեամբ թոյլ չեն տալիս, որ մարդիկ օգտագործեն իրենց պատկանող հողատարածքները, նորմալ կեանք վարեն եւ այլն: Նրանց ներկայութիւնով վտանգուած է մարդկանց առողջութիւնն ու կեանքը, մարդիկ չեն կարողանում օգտագործել իրենց հողատարածքները, վաստակել ընտանիքի եկամուտը: Որոշ դէպքերում ադրբեջանական զինծառայողների ներկայութեան պատճառով վտանգն այնքան է մեծ, որ մարդիկ կանգնած են էքզիստենցիալ հարցերի առաջ՝ կամ մնալ, կամ ապրել տառապելով»,- ընդգծել է Թաթոյեանը:

Արման Թաթոյեանը պատմել է, որ Ներքին Հանդում մարդիկ գետի ջուր են խմում, որովհետեւ ադրբեջանական կողմն օկուպացրել է նաեւ ջրի ակունքները. «Ոչ միայն խոհանոցում, կերակուր պատրաստելիս եւ այլն, նաեւ խմում են այդ ջուրը: Մարդիկ չեն կարողանում մշակել իրենց այգիները: Մարդիկ քուն ու դադար չունեն, որովհետեւ անգէն աչքով ադրբեջանական դիրքերը երեւում են: Ներքին Հանդ գիւղի դպրոցը ադրբեջանական դիրքերի անմիջապէս առաջ է: Պատկերացրէք մեր երեխաների իրաւունքների վիճակը. նրանք դաս են անում պատուհանից ադրբեջանական զինծառայողների զինուած դիրքը կարող է հանգիստ հետեւել՝ դպրոցում ինչ է կատարւում»:

Նա նշել է, որ միայն Ներքին Հանդը 3 կողմից շրջապատուած է ադրբեջանական 2 տասնեակից աւելի դիրքով.

«Պատկերացնո՞ւմ էք մարդկանց վիճակը, երբ այսպիսի պատկեր է: 2700 հա միայն Ներքին Հանդից գտնւում է ադրբեջանական օկուպացիայի ներքոյ: Ներքին Հանդում ծնողը երեխային չի կարողանում դպրոց տանել, այս դէպքում պատկերացնո՞ւմ էք խաղաղութիւն: Ներքին Հանդում մարդիկ չեն կարողանում գնալ եկեղեցի, գերեզմանոցներ: Մարդիկ պարբերաբար ականների պայթիւնների ձայներ են լսում: Մարդկանց ողջ կեանքը վերածել են անհնարինութեան: Այս պայմաններում, երբ կայ ադրբեջանական այս աստիճանի անօրինական ներկայութիւն, մարդկանց իրաւունքների կոպիտ խախտումներ, ո՞վ ընդհանրապէս կարող է խօսել Ադրբեջանի խաղաղ մտադրութեան մասին:

Ներքին Հանդի ուղղութեամբ սադրանքի ողջ դիսկուրսն այն մասին էր, որ մեղայ գալու տոնայնութեան մէջ այսպիսին էր՝ տեղի է ունեցել միջադէպ, հայկական կողմը քննելու է միջադէպը, նաեւ կառաջանան իրաւական հետեւանքներ հայ զինծառայողների համար: Այսինքն՝ ադրբեջանական զինծառայողներն ամէն օր մարդկանց կեանքն անհնարինութեան են վերածել, նրանք ամէն օր ցոյց են տալիս յանցաւոր վարքագիծ, նրանք մեր տարածքի ներսում են: Սա նշանակում է նաեւ, որ մեր զինծառայողների պաշտպանութեան բացարձակ լեգիտիմութիւն կայ: Դրա համար էլ այդ օպերացիայի անունը փորձում է դնել «հատուցում», մոռանալով, որ ինքն ամէն րոպէ այդպիսի յանցանքներ է գործում մեր ժողովրդի նկատմամբ»:

Միակ ճիշտ քայլը՝ ինստիտուցիոնալ արագ հակազդեցութիւն

ՎԱՀԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
«Այլընտրանքային նախագծեր» խմբի համահիմնադիր

Մէկ հոգին իր շքախմբի մի քանի անդամներով ճակատագրական որոշումներ է կայացնում ողջ պետութեան ու ժողովրդի համար եւ անունից:

Թէեւ դա կոչւում է պաշտօնական Երեւանի տեսակէտ, սակայն նրա լեգիտիմ հիմքերը խոցելի են մէկ պարզ պատճառով. թիմը եկել է իշխանութեան այլ ծրագրով, եւ իրականացնում է լրիւ հակառակը:

Հայաստանի հանդէպ հարեւանների եւ խոշոր տէրութիւնների վերջնական որոշումներին քիչ ժամանակ է մնացել (թուրքերը հիմա համբերատար սպասում են այդ որոշմանը), եւ հիմնական ճշտուելիք հարցը հետեւեալն է. արդեօք կատարուողը իշխող խմբակի կարծի՞քն է, թէ՞ ողջ հայ ժողովրդի, նրա ինստիտուտների եւ վերնախաւերի:

Հետեւաբար այս կարեւոր ջրբաժանի պահին բոլոր ոչ իշխանական համակարգերի՝ ընդդիմադիր խմբակցութիւններ, գոյութիւն ունեցող կուսակցութիւններ, հասարակական-փորձագիտական կազմակերպութիւններ, հանրային միաւորներ, իհարկէ՝ եկեղեցին, եւ այլն, պարտաւոր են ձեւակերպել ինստիտուցիոնալ այլընտրանքային տեսակէտ մի շարք կարեւորագոյն հարցերի շուրջ: Անհատական կարծիքը եւ գնահատականները բաւարար չեն, իրավիճակը պահաջնում է ինստիտուցիոնալ դիմադրութիւն եւ յստակութիւն: Մենք իրաւունք չունենք կրկնելու Արցախի շրջափակման 9 ամիսների մեղմ ասած անողնաշար եւ առանց անելիքի իմացութեան պահուածքը: Աւելի ուշ դրա գնահատականները կը տրուեն, թէ ո՛վ իրեն ինչպէս պահեց: Բայց հիմա դրա ժամանակը չէ, հիմա ուղղակի ճիշտ աշխատելու ժամանակն է:

Տեխնիկապէս ինչպէ՞ս դա կարւի, էական չէ՝ առանձին յայտարարութիւններ, թէ ի սկզբանէ միասնական փաստաթուղթ: Կարեւորը փաստաթղթի կամ փաստաթղթերի որակն է՝ գրագէտ, ռացիոնալ, պետական մտածողութեան գերիշխանմբ, առանց գաւառական հայրենասիրութեան տարրերի:

Ոչնիկոլական հանրութիւնը պէտք է յստակ դիրքաւորուի մի քանի կարեւորագոյն հարցերի շուրջ.

1. Հայ-ռուսական յարաբերութիւններ

2. ՀԱՊԿ շրջանակներում աշխատանք

3. Արեւմուտքի հետ ճիշտ օրակարգային յարաբերութիւններ

4. Ադրբեջանի հետ աւելի լուրջ եւ երկարաժամկէտ խաղաղութեան պայմանագրի կնքման վերաբերեալ հաստատակամութիւն

5. Տարածաշրջանում կայուն, արդար խաղաղութեան եւ համագործակցութեան շուրջ յստակ պատրաստակամութիւն

Սա նւազագոյնն է, որ մենք պէտք է անենք՝ իրավիճակը փրկելու համար: Սա ստեղծելու է կամ սկիզբ է դնելու նոր ներհասարակական տրամադրութիւնների եւ պրոցեսների: Սա ճիշտ պահն է՝ արձանագրելու, որ Հայաստանը միայն ՄԷԿ հոգին չէ, եւ սա ճիշտ պահն է՝ ներհանրային հաշտութեան գնալու: Թուրքական ռումբերը չեն նայելու մեր քաղաքական, անհատական կամ գէոպոլիտիկ նախասիրութիւններին: Մեր խնդիրն է՝ այդ ռումբերը թոյլ չտալ:

Եթէ այս հանգուցային պահին մենք ոչինչ չանենք, ապա ինչի՞ համար են ուրեմն այդ բոլոր ինստիտուտները, էլ ո՞ր իրավիճակի, ո՞ր պահի համար:

Խորտակւող նաւակը լքող առնետը կամ ինչպէս դառնալ յատուկ յանձնարարութիւններով «ընդդիմադիր»

Էդմոն Մարուքեանը յայտարարել է, որ այլեւս չի լինելու Նիկոլ Փաշինեանի յատուկ յանձնարարութիւններով դեսպանը:

«Վերջին շրջանում մի շարք արտաքին քաղաքական հիմնարար հարցերի շուրջ մեր տեսլականների տարբերութիւններն անհնարին են դարձնում իմ հետագայ ներգրաւածութիւնը արտաքին քաղաքական ճակատում»,- ասել է «լուսաւոր» Էդմոնը:

Էդմոնը միամիտ լոռեցու իմիջի մէջ մտած փորձում է մարդկանց միամիտի տեղ դնել:

Այդ ի՞նչ տեսլականների տարբերութիւն է, որը ստիպել է «գերսկզբունքային» սոյն յաճախորդին հրաժարական տալ: Նիկոլը տարիներ շարունակ նոյն տեսլականի մէջ է եղել: Այն պահին, երբ Էդմոնի համար պաշտօն յօրինեցին, այդ պահից սկսած էլ Նիկոլի մօտ բան չի փոխուել: Էդմոնը նիկոլական քաղաքականութիւնը, այդ թւում՝ Արցախի յանձնումը պաշտպանում էր մարմնի բոլոր մասերով ու յատկապէս՝ հետոյքով:

Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելը, Թուրքիայի նախապայմանները բաւարարելը, Հայաստանն աշխարհաքաղաքական բախումներում մանրադրամ դարձնելը Նիկոլ

(Շար. 7-րդ էջում)

Արմէն Աշոտեան.

«Ուղիղ ասենք՝ յանուն սեփական իշխանութեան Նիկոլն ունակ էր Հայրենիք յանձնել»

Աւանդաբար ՀՀԿ փոխնախագահ, քաղբանտարկեալ Արմէն Աշոտեանը կալանավայրից պատասխանում է «Ֆէյսբուք»-եան օգտատէրերի՝ իրեն ուղղուած 5 հարցի:

Քաղաքացի Աննա Սարկիսովան «Նուբարաշէն» ՔԿՀ-ում գտնւող քաղբանտարկեալ Արմէն Աշոտեանին հարց է ուղղել.

«Հնարաւո՞ր է ընտրութիւններով Նիկոլին յաղթել, թէ՞, միեւնոյն է, պէտք է բողոքի ակցիաներ լինեն»:

Աշոտեանը պատասխանել է.

«Ուղիղ ասենք. յանուն սեփական իշխանութեան Նիկոլն ունակ էր Հայրենիք յանձնել, մարդ զոհել, ընտրութիւնները ի՞նչ են, որ դրանք էլ ոտնակոխ անի: Թէ ինչի՞ է նա ընդունակ նաեւ ընտրութիւններից առաջ, ընթացքում եւ յետոյ, պէտք չէ յիշեցնել (ՏԻՄ ընտրութիւններից սկսած):

Ուստի, ընտրութիւններին նրան պէտք է ոչ միայն յաղթել ջախջախիչ արդիւնքով, այլեւ պատրաստ լինել

(Շար. 7-րդ էջում)

«Դրօշակ»-ի առաջնորդող.

Ինչո՞ւ իշխանափոխութիւն տեղի չի ունենում

Ինչո՞ւ Հայաստանում իշխանափոխութիւն տեղի չի ունենում: Պարզ շփումների ընթացքում անգամ իւրաքանչիւր ոք համոզւում է, որ դրա համար գոյութիւն ունի հանրային մեծ պահանջ: Ակնառու է, որ իշխանութեան յետեւից դեռ երէկ գնացողների գերակշիռ հատուածն անգամ խորապէս հիասթափւած է իր ողբերգական ներկայի ու առաւել անհեռանկար ապագայի համար եւ երազում է ստեղծւած կացութեան յաղթահարումը: Այդ դէպքում ինչո՞ւ տեղի չի ունենում հասարակական-քաղաքական այն կենսական բարեշրջումը, որի մասին երազում է երկրի բարոյական, հոգեւոր ու ֆիզիկական արժէքների խորտակման շեմին կանգնած բնակչութեան մեծամասնութիւնը: Արտահերթ իշխանափոխութեան հնարաւորութիւնը կապելով անմիջականօրէն ընդդիմադիր դաշտում գործող ուժերի գործունէութեան հետ՝ շատ մարդիկ մտածում են, թէ այդ հնարաւորութեան չիրացման համար մեղաւոր են հէնց ազգային ուժերը: Աւելին, հանրութեան մի որոշ հատւածը կարծում է, թէ վերջիններս գործակցում են իշխանութեան հետ եւ աշխատում են նրա համար:

Ընդդիմութեան գործունէութիւնից դժգոհ մարդիկ դատում են այսպէս. «Ամէն անգամ, երբ ազգային հիմնահարցերի շուրջ իրավիճակը սրւում է, ընդդիմութիւնը կոչով ժողովրդին դուրս է բերում հրապարակներ, մի քանի օր ցոյցեր ու հանրահաւաքներ է անցկացնում՝ ոչ մի նոր բան չանելով ու չասելով, մինչեւ հիասթափւած ցուցարարների շարքերը սկսում են նոսրանալ, որից յետոյ ընդդիմութիւնը անորոշ խոստումներով մնացածին ճամբում է տուն»: Հասարակական գիտակցութեան մէջ տիրապետող է դառնում այն մտայնութիւնը, որը անցած դարասկզբին գրած համանուն աշխատութեան մէջ Դաշնակցութեան հիմնադիր Քրիստափոր Միքայէլեանն անւանել է «Ամբոխային տրամաբանութիւն»: Ըստ Ք. Միքայէլեանի՝ ամբոխի տրամաբանութիւնը մակերեսային է եւ այն եզրակացութիւնների է յանգում՝ միմեանցից բխեցնելով իրարայաջորդ երեւոյթները, այսինքն՝ եթէ տեղի ունեցած մէկ երեւոյթին անմիջապէս յաջորդում է դրան առնչւող երկրորդ իրադարձութիւնը, ուրեմն երկրորդը ուղղակիօրէն բխում է առաջինից: Այս դատողութիւնը իշխանութեան դէմ պայքարող ուժերի նկատմամբ մարդկանց հիասթափութիւնը յաճախ դարձնում է ոչ պակաս, քան իշխանութեան նկատմամբ եղած դժգոհութիւնը:

Բազմաթիւ անգամներ յուսալքւելով՝ շատերի ներսում խմորւում է հերթական անգամ խաբւելու մտավախութիւնը: Նման մարդիկ դատում են հետեւեալ կերպ. «Դէ, եթէ սրանք էլ նոյնն են, եւ ամէն նորի գալով իրավիճակը նոյնը կամ աւելի վատը պէտք է դառնայ, ինչո՞ւ փոխել, թող գործողները վեր ընկնեն իրենց աթոռներին, քանզի ամենավատ հասկանալին աւելի լաւ է, քան անորոշ վատի հեռանկարը»: Եթէ ուշադիր լինենք իշխանութեան լայն ու բազմազան քարոզչադաշտի նկատմամբ, կը հասկանանք, որ այս մտածողութիւնն ու հոգեվիճակը ամենից շատ ձեռնտու է հէնց իշխանութիւններին, որոնք էլ զարգացնում ու խորացնում են տւեալ մտայնութիւնները, ձեւ են անում, թէ միասին ընդհանուր աշխատանքներ են իրականացնում իրենց քննադատողների հետ, հարցեր են քննարկում, խորհրդարանական հարթակում, բանավիճում են եւ այլն: Ազգային ուժերի հանդէպ թերահաւատութեան պատճառներից է հանրային միջավայրում տեղ գտած այն կարծիքը, թէ վերջիններս շատ թոյլ են, իսկ իշխանութիւնը՝ բազմապատիկ ուժեղ եւ մշտապէս կարողանում է յաղթել մրցակիցներին: Զանգւածների պարզ պատկերացմամբ իրար հետ մրցակցութեան մէջ են ընդդիմադրութեան ողջ բանակը եւ իշխանութեան թիմը՝ ի դէմս իր առաջնորդի, եւ այս մրցակցութեան մէջ մշտապէս մէկ թիմը, իսկ աւելի ճիշտ՝ մէկ անձը կարողանում է յաղթել մնացած բոլորին: Երեւոյթների խորքը թափանցելու դէպքում կարելի է տեսնել, որ իրականում իշխանական թիմը, աւելի ճիշտ՝ նրա առաջնորդը, ըստ էութեան, ուզուրպացրել եւ իր նպատակներին ու իր պաշտպանութեանն է ծառայեցնում ողջ պետական համակարգը՝ խորհրդարան, կառավարութիւն, կենտրոնական եւ տեղական իշխանութիւն, քարոզչամիջոցներ եւ յատկապէս ուժային կառոյցներ, որոնք 24 ժամ ծառայում են «տիրոջը»:

Ուղղակի եւ անուղղակի ձեւով այս իշխանութեանը թեւ ու թիկունք են Հայաստանի ներքին իրավիճակի հարցում շահագրգիռ գրեթէ բոլոր արտաքին ուժերը՝ աչք փակելով ներքին կեանքի կառավարման միանձնեայ եւ բռնապետական մեթոդների, քաղաքական հալածանքների, երկրի հիմնական օրէնքների ոտնահարման ամենօրեայ փաստերի վրայ: Եւ հակառակը, նոյն արտաքին ուժերը բացայայտօրէն գովերգում են իշխող թիմի գործունէութիւնը՝ գնահատելով այն որպէս ժողովրդավարական: Նոյն այդ ուժերը ֆինանսական, քաղաքական-քարոզչական եւ այլ բնոյթի մեծ աջակցութիւն ցոյց տւեցին այս թիմին իշխանութեան համար պայքարի ժամանակ: Իսկ, թէ որտեղից եկած հրահանգներով «թաւշեայ յեղափոխութեան» վճռորոշ օրերին տասնեակ հազարաւոր մարդիկ հեղեղեցին մայրաքաղաքի եւ հանրապետութեան այլ բնակավայրերի փողոցները, իշխանութիւնը հրաշալի գիտի, ինչպէս եւ հրաշալի գիտի, որ նման հրահանգ երբեք չի իջնի ինքնուրոյն եւ ազգակենտրոն քաղաքականութիւն իրականացնող ուժերի համար:

Ազգային ուժերից իշխանափոխութիւն պահանջող հանրութիւնը պէտք է նկատի ունենայ, որ արտաքին ուժերը ոչ միայն չեն աջակցելու, այլեւ ամէն ինչ անելու են ձախողելու համար Հայաստանի ներկայ ղեկավարութեան փոխարինումը ազգային ուժերով: Իսկ արտաքին գործօնի դերակատարութիւնը հիմնական է որեւէ երկրում յեղաշրջում յիշեցնող «յեղափոխութիւնների» պարագայում: Ազգային ուժերին բացառելը եւ խամաճիկների վրայ յենւելը չգրւած օրէնք է որեւէ պետութեան վրայ ազդեցութիւն ունեցող կամ դրան ձգտող ուժերի համար: Նրանց համար անցանկալի է այնպիսի ուժերի իշխանութեան գալու հնարաւորութիւնը, որոնց ազգանրպաստ ու ինքնուրոյն քաղաքականութիւնը կարող է հակասել իրենց ծրագրերին: Անցնող տարիներին արտաքին ուժերը բազմիցս դրսեւորել են այդ վերաբերմունքը՝ իշխանութեանը վստահեցնելով, որ գերադասում են «իրենց հետ աշխատել»: Եւ, ինչպէս այլ պարագաներում, իր արատը վերագրելով ընդդիմութեանը՝ իշխանութեան հակաքարոզչութեան հիմնական ուղղութիւններից մէկն այն է, թէ ընդդիմութեան յետեւում արտաքին ուժեր են կանգնած: Քաղաքական խամաճիկները նոյն մեղքի մէջ մեղադրում են նրանց, ովքեր իրենց ողջ կենսագրութեան ընթացքում ծառայել են հայ ժողովրդին ու հայոց պետականութեանը՝ անգամ այն պարագաներում, երբ հայ ժողովրդի որոշակի հատւածներ մոլորւած են եղել քաղաքական սպառնալիքների, նախընտրութիւնների լաբիրինթոսում: Արտաքին աջակցութիւնների պարագայում ընդդիմութիւնն այսօր նախեւառաջ պէտք է ձեռքի տակ ունենար շօշափելի նիւթական հնարաւորութիւններ, ինչը լայնածաւալ եւ երկարատեւ պայքար կազմակերպելու գլխաւոր գրաւականներից մէկն է:

Ներքաղաքական իրողութիւններին քիչ թէ շատ իրազեկ մարդկանց համար ակնյայտ է, որ ազգային ուժերը չունեն նման հնարաւորութիւններ, նրա պահանջներն ու բողոքի գործողութիւնները արձագանգ չեն գտնում ոչ մի օտարերկրեայ պետական համակարգի կողմից: Հայաստանի աւտորիտար համակարգն այս ընթացքում արտաքին քննադատութեան եւ ճնշման չի ենթարկւում, իսկ թէ ինչպիսի խորհրդատուներ են կուլիսների յետեւում աշխատում իշխանութեան համար, ինչպիսի քարոզչութիւն եւ հակաքարոզչութիւն են նրանք իրականացնում հայկական քարոզչադաշտում, մնում է անտեսանելի: Կարելի է, փոխարէնը, քիչ փորփրել յիշողութիւնը եւ մտաբերել, թէ ինչ էր տեղի ունենում օտար հասարակական կազմակերպութիւնների ցանցում վարժեցւած երիտասարդ «յեղափոխականներին» իշխանութեան բարձունքներ հրելու ժամանակ: Այդ ամէնը, սակայն, ասում ենք՝ բնաւ ոչ ցաւալով ազգային ուժերի համար, որովհետեւ ազգայինը հէնց նրանով է ազգային, որ ազգակենտրոն է ու ինքնուրոյն ու երբեք չի յայտնւում կախումների սարդոստայնում, ինչը կարող է թէ՛ նրա եւ թէ՛ հայրենիքի համար ճակատագրական հետեւանքներ ունենալ: Մի բան, ինչի ականատես ենք ներկայում: Ի վերջոյ, ինչպէս քաղաքական, նոյնպէս եւ բարոյական դաշտում (որոնք սերտօրէն շաղկապւած են իրար) դժւարը մէկ անգամ փչանալն է, մանաւանդ որ այս կորուստն անվերականգնելի է:

Հայրենասէր, պայքարունակ հայ մարդու համար ամենաանըմբռնելի երեւոյթն այն է, թէ ինչպէս կարող է իր ազգակիցն ու բարեկամը ձայն տալ

(Շար. 6-րդ էջում)

Դէպի ապագան նայող տեսլականով

ԱԶԱՏ ՕՐ

«Ազատ օր» Արմենական Հեմերիսիա Էֆեմերիտա

ԱԶԱՏ ՕՐ ՕՐԱԹԵՐԹ – 80-ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 22626 www.azator.gr

ԱԹԷՆՔ, ՈՒՐԲԱԹ 1 - ՇԱԲԱԹ 2 ՄԱՐՏ 2024 • ΑΘΗΝΑ, ΠΑΡΑΣΚΕΥΗ 1 - ΣΑΒΒΑΤΟ 2 ΜΑΡΤΙΟΥ 2024

Ամենքս ներկայացրեցինք

ԴԷՊԻ ԱՊԱԳԱՆ ՆԱՅՈՂ ՏԵՍԼԱԿԱՆՈՎ

Մօտ երկու ամիս առաջ, մեր ընթերցողներուն ներկայացուցինք «Ազատ Օր»-ի հրատարակութեան տարբեր ձեւը, որուն համաձայն, թերթը առանց ընդհատելու իր օրական ներկայութիւնը գաղութէն ներս, պիտի ունենայ ամենօրեայ էլեկտրոնային հրատարակութիւն միայն, իսկ ուրբաթ օրուան թիւը պիտի ըլլայ նաեւ տպագիր, աւելի ճոխ էջերով եւ նիւթերով: Միաժամանակ, կը յայտնէինք, թէ թերթիս պաշտօնէութիւնը ու անոր պատասխանատու մարմինները արդէն ընթացքի մէջ դրած էին հրատարակութեան նոր ձեւաչափի մը կազմութիւնը, որ քայլ պիտի պահէ մամուլի աւելի արդի ըմբռնումներուն հետ:

Ահա այսօր, «Նոր Օր» օրաթերթի 100-ամեակին եւ անոր շարունակութիւնը հանդիսացող «Ազատ Օր»-ի հրատարակութեան 80-ամեակին առիթով, մեր ընթերցողները իրենց ձեռքին մէջ կը բռնեն 12 էջերէ բաղկացած նոր թիւ մը, բոլորովին տարբեր էջադրումով, նոր տառատեսակներով եւ նոր կազմութեամբ: Միաժամանակ, անոր մէջ լոյս կը տեսնեն ճոխ նիւթեր, որոնք կը գոհացնեն մեր ընթերցողներու տարբեր ճաշակները: Այսպէս, թերթը այսուհետեւ պիտի հրատարակւի իր նոր ձեւաչափի սահմաններուն մէջ, օրական էլեկտրոնային 4 էջով, իսկ ուրբաթ օրուան թիւը տպագիր եւ էլեկտրոնային՝ 12 էջով:

Ժամանակի պահանջ էր կատարւած փոփոխութիւնը: Յաճախ անդրադարձած ենք մամուլի դիմագրաւած տագնապին, էլեկտրոնային միջոցներու տիրական ներկայութեան, հայ թերթի նահանջին ու նոր սերունդին կողմէ դասական մամուլի ընթերցասիրութեան պակասին: Սակայն, որքան ալ ձեռքի հեռաձայններու կամ այլ էլեկտրոնային սարքերու պաստառները հրապուրիչ դառնան իրենց գունագեղ նկարներով ու բազմատեսակ ճոխութեամբ, կարելի չէ անոնք համեմատել ու նոյն նժարին վրայ զետեղել տպագիր մամուլի արժէքներուն հետ: Թերթը կը շարունակէ հանդիսանալ իրական լուրի ու վերլուծական գաղափարներու ամենէն արժանահաւատ ու փաստացի միջոցը, երբ անդին, համացանցին մէջ, կեղծ լրատւութիւնը ողողած է մարդոց տեսապատկերն ու մտածումներու աշխարհը, հսկայական աւեր գործելով քննական կարողութեան եւ կարծիք ստեղծելու մարդկային յատկանիշներուն:

Դժբախտաբար, հայկական համացանցի ոլորտն ալ ինկած է կեղծիքի աշխարհին մէջ, յաճախ այլանդակւած ու վարկաբեկիչ լուրերու, եղելութիւնները այլափոխելու, աժան վերագրումներու եւ թիւր կարծիք ստեղծելու իրարանցումին մէջ թաւալած ըլլալով:

Միայն արժանահաւատ մամուլը, որուն մէջ նաեւ դասական թերթը, ան որ յստակ պատկանելիութիւն կը ներկայացնէ, ազգի հարազատ ուժերու եւ կազմակերպ կառոյցներու ակունքէն կը սնանի, կրնայ վայելել ժողովրդային ընդունելութիւն եւ յարգանք:

Այս բոլորին լոյսին տակ, յունահայ գաղութի սիրւած օրաթերթը, որ միաժամանակ կը հանդիսանայ եւրոպական տարածքի միակ օրաթերթը, կը շարունակէ իր անխափան հրատարակութեան ուղին, վերանորոգւած բովանդակութեամբ ու տեսքով: Միշտ երիտասարդ ու կենսունակ մնալու նախանձախնդրութեամբ, մեր թերթը իր 80-ամեայ պատմական երթի սեմին, կը վերանորոգէ իր հաւատարմութիւնը իր թանկագին ընթերցողներուն հանդէպ, հայեացքը սեւեռած ըլլալով ապագայի տեսլականներուն:

Վստահ ենք, որ մեր ընթերցողները, անգամ մը եւս պիտի գրկեն իրենց սիրելի օրաթերթը, ինչպէս միշտ: Անոնք որեւէ ջանք պիտի չխնայեն մատնանշումներով, թելադրանքներով, գործնական զօրակցութեամբ եւ առօրեայ կապով՝ թերթի բարելաւման ու յարատեւման, անոր առաքելութեան հզօրացման համար յունահայ գաղութէն ներս:

(Շար. 6-րդ էջում)

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ ընտրութիւնների գումարման ընթացքին Թեհրանի կուսակալի այցը՝ Ս. Սարգիս եկեղեցու ընտրատեղամաս

Ուրբաթ, մարտի 1-ին կայացած Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ եւ Առաջնորդութեան բանիմացների խորհրդի 6-րդ գումարման ընտրութիւնների ընթացքին առանձին այցելութեամբ Ս. Սարգիս եկեղեցու ընտրատեղամաս այցելեցին Թեհրանի կուսակալ Ահմադ Ղոյումին եւ 107-րդ շրջանի ոստիկանութեան կազմի պատասխանատուները, ովքեր հանդիպում ունեցան Սրբազան Հօր հետ:

Հանդիպումներին ներկայ էին Թեմական խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանը, Տ. Սահակ քհնյ. Խոսրովեանը եւ ազգային առաջնորդարանի դիւանապետ Զօրիկ Կարապետեանը:

Նոյն օրը Սրբազան Հօր հետ հարցազրոյց ունեցան Իրանի ռադիոհեռուստատեսութեան PressTV-ի եւ «Խաբար» հեռուստալիքները:

Հանդիպումներից յետոյ Սրբազան Հայրը ընտրութիւնների ընթացքին մօտկից ծանօթանալու նպատակով, այցելութիւն ունեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Սրբոց Թարգմանչաց եկեղեցիների ընտրատեղամասեր:

Սրբազան Հայրը ընդունեց Ս. Մինաս եկեղեցու Եկեղեցական խորհրդի ներկայացուցիչներին

Երկուշաբթի, փետրուարի 26-ին, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանը, իր գրասենեակում ընդունեց, Ս. Մինաս եկեղեցու Եկեղեցական խորհրդի անդամներից՝ Ժանետ Կարապետեանին եւ Լիլիա Գէորգեանին:

Հանդիպմանը զեկուցեց խորհրդի աշխատանքների մասին, նաեւ հընչեցին առաջարկութիւններ խորհրդի կազմի համալրման կապակցութեամբ:

Սրբազան Հայրն իր գոհունակութիւնը յայտնելով, անհրաժեշտ թելադրութիւնները կատարեց եւ յաջողութիւն մաղթեց նրանց աշխատանքներին:

Հանդիպմանը նաեւ ներկայ էր եկեղեցիների խորհուրդներից ընտրուած յանձնախմբի ներկայացուցիչ եւ Քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի պատասխանատու՝ Շաքէ Եղիայեանը:

Արեւագալի ժամերգութիւն Ս. Աստուածածին եկեղեցում

Երկուշաբթի, փետրուարի 26-ի առաւօտեան, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի հովանաւորութեամբ Ս. Աստուածածին եկեղեցում տեղի ունեցաւ Արեւագալի ժամերգութիւն մասնակցութեամբ՝ Քահանայից դասի եւ հաւատացեալների:

Մեծ Պահքի պահեցողութեան քառասնօրեայ ժամանակահատուածի ընթացքում եկեղեցիներում կատարւող Արեւագալի, Խաղաղական եւ Հանգստեան ժամերգութիւնները, իրենց բովանդակութեամբ՝ աղօթքներով, քարոզներով, մաղթանքներով եւ հոգեւոր երգերով, առիթ են ընծայում հաւատացեալներին հոգեւորապէս եւ արժանապէս ապրելու ապաշխարութեան այդ ժամանակաշրջանը:

Հարկ է նշել, որ առաջիկայ երկուշաբթի, մարտի 4-ի առաւօտեան ժամը 9:00-ին, Արեւագալի ժամերգութիւնը տեղի է ունենալու Ս. Վարդանանց եկեղեցում:

Ազգային առաջնորդարանի
Հանրային կապի գրասենեակ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
«ԱՐՏԱՁ» պաշտօնական ամսագրի

ԱՒԱՐԱՅՐԻ ՍԽՐԱՆՔՈՎ, Ս. ԹԱԴԷԻ ՇՆՉՈՎ



Հայ եկեղեցական տօնացոյցը փետրուար ամսին է տեղադրել Վարդանանց տօնը, թէպէտ Վարդանանց պատերազմը տեղի է ունեցել 451 թ.-ի մայիս ամսին:

Աւարայրի դաշտին այսքան մօտիկ կանգնած Սուրբ Թադէի վանքում, վստահաբար վանահայրն ու վանականները 451 թ.-ին իմացան այն արիւնահոտ լուրը «երբ կեանքից-կեանք էին անցնում զինւորներն հայի»:

Մեր պատմութեան սխրանքը հանդիսացած Աւարայրի ճակատամարտը այսքան մօտիկ Սուրբ Թադէի վանքին, վստահաբար իր պայքարի կրակը դրոշմել էր վանքի պատերին, որի հետեւանքով դարեր ամբողջ դիմացել է այս կառոյցը, մինչեւ դէպի երկինք իր խոյանքով յոյս ներշնչելով բոլորին: Ձմռան ցուրտին, ձիւնապատ եւ սառցակալած, սոյն վանքը չի՛ կորցնում մեր ժողովրդի պայքարի ոգի հաղորդելու ունակութիւնը, իսկ մեր ժողովուրդը՝ երբեք չի՛ կորցնում իր հաւատքը՝ վերստին յաղթելու…:

Աւարայրի բլրուլին ձօնուած Ալիշանի բառերով, «Թադէի վանուց ձենիկդ ինձ դիպաւ, սրտիկս որ ի խաչն է կիպ թունդ առաւ, ի խաչին թեւերն թռայ ու հասայ, գտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ»: Բլրուլը Ս. Թադէի վանքի խաչի թեւերը բռնած թռչել է, ու գնացել Աւարայր…

Դարեր են անցել արդէն Վարդանանց ճակատամարտից, երբ հայոց Զօրավարը փռւեց գետին, սակայն նրա մահւամբ արձանագրուած յաղթանակը եւ ազգային հպարտութիւնը, նորափթիթ հայ երեխան իսկ զգում է իր հոգում, «Հայ եմ ես, հայ եմ ես, քաջ Վարդանի թոռն եմ ես»-ը ասմունքելով, նոյնիսկ 1573 տարիներ յետոյ:

Սիսրաբարբառ Եղիշէի գովերգած հերոսը սակայն, ամէն օր Սուրբ Թադէում է: Նրա զաւակներն ու թոռները, ծոռներն ու ծոռնորդիները, ինչպէս նաեւ սրանց թոռներն ու ծոռնորդիները միշտ հանդիպում են նրան Վանքում, տարւայ բոլոր եղանակներին, ամռան թէ ձմռան:

Այս ձմեռ առաւել եւս սիրունացաւ Ս. Թադէի վանքը, սաւանագոյն ձիւնասպիտակութեամբ ծածկւելով: Շրջակայ ծառերն ու թփերը, իրենց տերեւներից լերկացած դաշտային բոյսերն ու աղէսների որջերը գեղազարդւել էին, երկնային արւեստագէտի ձեռամբ ջնարակւած…: Ծառերի ճիւղերի վրայ հատիկ առ հատիկ աւելացւած ձիւնը, յարկ առ յարկ էր կուտակւել, քամիի դիմաց վերմակ լինելով ու տաքացնելով հէգ ծառերին:

Աւարայրի դաշտը նոյն տարածքում գտնւելով, միշտ զգում ենք դրա «Արծիւ»-ի՝ Ս. Վարդան Զօրավարի ոգեղէն ներկայութիւնը դրա շրջապատում: Մենաւոր այս վանքի գմբէթների վերեւ միշտ սաւառանում է Հայոց պատմութեան «Արծիւ»-ը, որի արդէն երկարած ու դարերի ուժգնութիւն ընկալած մագիլների տակ տրորւելու են հայ ազգի հեռաւոր թէ մերձակայ թշնամիները: Ձմռան այս խիստ եղանակին, Ս. Վարդանի շնչով է ջերմացել վանքի ձիւնասպիտակ շրջապատը, եւ ամէն քարի ու պատի վրայ լուսաքանդակ երեւում է նրա խրոխտ դէմքն ու կարմիր շրջազգեստը, մէջքին թուրը կապած:

Տարօրինակ, բայց իրաւ, որ չի՛ խորտակւում հայի հոգում՝ վերջնական յաղթանակի կամքը: Այսպէս ենք անցել ազգովի, պատմութեան ամենադժարին անցքերից եւ վերյառնել աղէտներից:

Դեռ նոր կորցրած մեր բնօրրանին այսքան մօտ, Ս. Թադէում նստած, կոտտում է վէրքը մեր սրտի, սակայն միաժամանակ զօրացնում կամքը մեր ապագայ յաղթանակի:

Աւարայրի սխրանքով գօտեպնդուած եւ յուսադրուած դարձեալ նայում ենք զոյգ գմբէթներին սրածայր, վերյիշելով Սուրբ Վարդանի սուրը երկսայրի, դրած պարանոցին երկչոտ թշնամուն: Նոյն սխրանքով զօրացած, նոր Աւարայրներ են սպասւում մեր կեանքում, վերջնական յաղթանակի ու գոյատեւման ի խնդիր:

Ատրպատականի հայոց թեմի
հրատարակչութիւն
«Արտազ» ամսագիր
(թիւ 2, փետրուար 2024 թ.)

Արուեստի մասին

ԳՐԻՇ ԴԱՒԹԵԱՆ



Նոր արուեստը, ակնյայտ է, արուեստ չէ բոլորի համար, ինչպէս օրինակ, ռոմանտիկական արուեստը. նոր արուեստը գրաւում է յատուկ օժտուած փոքրամասնութեանը: Այստեղից է հետաքրքրութիւն եւ գրգռածութիւն առաջանում հաւաքականութեան մէջ:

Նոր արուեստը հասկանալի է ոչ բոլորին, դա նշանակում է, որ այն չի հանդիսանում համամարդկային: Արուեստը նախատեսուած է ոչ բոլոր մարդկանց համար ընդհանրապէս, այլ միայն փոքրաթիւ մարդկանց համար, որոնք, գուցէ եւ առաւել չեն միւսներից, բայց ակնյայտօրէն նման չեն միւսներին:

Յիշենք, որ բոլոր ժամանակներում, երբ գոյութիւն են ունեցել արուեստի երկու տարբեր տեսակներ՝ մէկը փոքրամասնութեան համար, միւսը մեծամասնութեան համար, վերջինս միշտ եղել է ռէալիստական, իրապաշտական:

Պոէտը սկսւում է այնտեղ, որտեղ վերջանում է մարդը: Մարդու ճակատագիրն է՝ ապրել իր մարդկային կեանքով, իսկ պոէտի խնդիրն է՝ ստեղծել այն, ինչը գոյութիւն չունի:

Մարդկանց մեծամասնութեան համար էսթետիկական, գեղագիտական հաճոյքը չի տարբերւում, սկզբունքօրէն, այն ապրումներից, որոնք ուղեկցում են նրանց առօրեայ կեանքում, նրանց օրաւուրի մասն են կազմում:

Դեբիւսին երաժշտութիւնից հեռացրեց հումանիզմի զգացումը, դրա համար էլ նրա հետ է սկըսւում նոր էպոխան ձայնային արուեստի:

Բայց հարցն այն է, որ գեղարուեստական ստեղծագործութիւնը հանդիսանում է այդպիսին, միմիայն այնքանով, որքանով այն ռէալ չէ:

Արուեստի առաքելութիւնը՝ ստեղծել իդէալ հորիզոններ, որպիսի ձգտենք դրան. կայ միմիայն մի միջոց՝ հերքել մեր իրականութիւնը՝ բարձրանալով նրանից: Նկարիչ լինել՝ նշանակում է չընդունել լուրջ, լուրջ մարդկանց, ինչպիսիք հանդիսանում ենք մենք, երբ չենք հանդիսանում որպէս նկարիչ:

Եթէ ատելութիւնը ապրում է արուեստում, ինչպէս լրջութիւն, ապա սէրը արուեստում, ձգտելով իր յաղթանակին, ցուցաբերում է իրեն որպէս կատակերգութիւն, ամէն ինչի վրայ յաղթանակող, ներառելով նաեւ իրեն, նման նրան, ինչպէս հայելիների համակարգում, անսահման անգամ արտացոլելով միմեանց մէջ, որ մի կերպար չի լինում վերջնական՝ բոլորը աչքով են անում միմեանց՝ ստեղծելով մաքուր կեղծութիւն, կեղծիք:

Պոէզիան այսօր՝ մետաֆորի, փոխաբերութեան բարձրագոյն հանրահաշիւն է, բանաձեւը:

Անընդունելի է նոր գրութիւնը հումանիզմի անունից դատապարտելու մտադրութիւնը:

Պոէզիան դարձաւ նպատակ այն դէպքում, երբ նախկինում այն դիտւում էր որպէս միջոց:

Չեւի փորձարկումը, ինքնանըպատակ է:

Մարդկութեան պատմութիւնը անիմաստ, անկառավարելի քաոս է:

Մարդը կոյր խաղալիք է բնազդների, քաղաքական կրքերի, ճակատագրական պատահականութիւնների, անսպասելի որոշումների:

Մենք կանգնած ենք նախաշեմին բոլորովին նոր արուեստի, որոնց ձեւոյթների միաձուլումը ոչինչ չի ներկայացնում, չի պատկերում, ոչինչ չի պատմում, բայց որը համակում է հոգին այնպէս խորը, ինչպէս այդ կարող է անել երաժշտութիւնը. կամ գեղարուեստական գրականութեամբ ձեւակերպուած մտակերպարը. կամ գեղանկարչութեամբ գոյների ու մոյների չնախորդուած մի համադրոյթ...

Ինչ վերաբերում է ստեղծագործութեան իմաստին, ապա նոր արձակը, բանաստեղծութիւնը, երաժշտութիւնը, գեղանկարչութիւնը չեն ձգտում նրան, որպիսի լինեն իմաստաւորուած, ճշմարտացի կամ ռէալիստական, իրապաշտական:

Ընդհակառակը այն կը լինի միտումնաւոր կերպով անտրամաբանական, իռացիոնալ, չիրապաշտական, չհետեւողական, չկապակցրուած:

Հարկաւոր է մաքրել գրականութիւնը որեւէ անձնական եւ հասարակական փորձից, դրանց միանգամայն ու միատեղ ներառումով:

Բացարձակօրէն անընդունելի եւ արատաւոր է հանդիսանում պատկերացումը գրականութեան մասին, որպէս միջոց մարդու կողմից ճանաչելու ինքն իրեն, շրջապատող աշխարհը, իմաստն ու նպատակը գոյութիւն ունեցող ամէն ինչի:

Ապագայի գերարձակութեան պայմաններում կոչնչացեն բոլոր տարբերութիւնները իրականի եւ երեւակայականի, ճշմարիտի եւ կեղծիքի միջեւ...

Գրականութիւնը...չունի բովանդակութիւն, այն հիմնուած է, նրա բացակայութեան վրայ... Նշանակութիւնը՝ ձեւի, համակարգը՝ կապերի, ահա թէ ինչ է ի սկզբանէ նրանց յատկանշական:

Հումանիզմը, որը տարածում են համալսարանները եւ որը մարմնաւորում է մեր ռէալիստական գրականութիւնը, արդիւնք է պատմական կուրութեան:

Պոէտին պոէտ է դարձնում արտայայտութիւնը ո՛չ թէ ներքին կամ շրջապատող աշխարհի, ո՛չ թէ լուծումները հոգեբանական կամ բարոյական բարդութիւնների, ո՛չ թէ հաղորդումը աշխարհի ինչոր մտապատկերի. կամ ընթերցողին զարմացնելը, ո՛չ թէ այս կամ այն բառագործածութիւնը եւ այլն, թէեւ, իհարկէ այդ ամէնը կարող են լինել նրա աշխատանքում: Բայց աւելի շուտ նրա խնդիրն այն է, որ կառուցի արուեստի միջոցներով լեզուային նիւթից ու փորձից տարբեր, աւարտուն ձեւեր ու կաղապարներ, որոնց մէջ մենք ընկալման ընթացքում կը տեսնենք ոչ այնքան լեզուաձական վարպետութիւնը պոէտի, որքան որոշակի աւարտուն արժէքներ, զգացմունք, երեւակայութիւն, ծիածանի եօթը գոյներով շքեղացած.....

Չի կարող գոյութիւն ունենալ աւելի վեհ ու ազնւաբարոյ իրականութիւն քան ինքը բանաստեղծութիւնը, բանաստեղծութեան խօսքը. բանաստեղծութիւնը, որը հանդիսանում է բանաստեղծութիւն եւ ոչինչ ուրիշ, եւ գրուած է ինքն իր համար, որ դառնում է ամենքինը:

Միայն պոէզիային է թոյլատրուած պատմել իր երազները:

Պոէզիան փորձի հիման վրայ ներբմբռնում է տարերային, բնազդական զգացումը, որ թելադրում եւ ներշնչում է, յանգաւորում, չափագրում է, ապա ճիշտ ըմբռնողութեամբ կողմնորոշւում, կռահում է տիեզերքը, իսկ միտքը՝ նրա համակարգումն է:

Չկայ ոչ սահման, ոչ արգելք՝ միայն արբեցուցիչ ազատութիւն:

Երեւակայութիւնը առաջին աստիճանն է ու հիմքը ամբողջ պոէզիայի:

Իմ համար, երեւակայութիւնը հումանիշն է յայտնագործութիւններ անելու ընդունակութեան:

Այն, ինչ պոէտական խօսքը համադրում է կերպարների հետ, խաղ է: Այն օգտագործում է նրանց ոճական կարգով, ներդնում է նրանց մէջ գաղտնիքներ եւ իւրաքանչիւր կերպար, խաղալով, պատասխանում է ինչոր հանելուկի: Այդ պատասխանը մեր փնտրածն է ու գիւտը:

Արդեօք այդ բոլորը կապ ունե՞ն գրելու համար օգտագործող տեխնիկայի հետ: Երբ գործածւում էր մուրճ ու հատիչ, քարի վրայ էին գրում: Երբ գործածւում էր սրածայր փայտ, կամ փետուր, մագաղաթի վրայ էին գրում թանաքով: Սկսեցինք գործածել մատիտ, ապա գրիչ ու գրչածայր, ապա ինքնահոս գրիչ, ապա գնդածայր գրիչ... թղթի վրայ գրելով: Ապա գրամեքենայ... հիմա գործածում ենք համակարգիչը, որ զինուած է ամենայն կարելիութիւններով, արխիւներով, բառարաններով, նոյնիսկ գոյներով... արհեստական գիտակցութեամբ, խելքով ու ուշքով... գրականութիւնը ու՛ր է հասնելու՛՛՛... Այս վերջին տեխնիկական կիրառութիւնը դեռեւս օգտագործման նախաշաւիղում է... որ գըրւում է լուսաւոր պաստառի վրայ, ու ըստ ցանկութեան՝ տպագրում ենք թուղթի վրայ... կամ էլ-նամակային առաքումներ ենք անում դէսուդէն... առանց նամակադրոշմի... ամէն տեղ...

Խելքս չի հասնում... անսահման... անծիր...

Լաուրա Էնն Կալպակեան
Laura Kalpakian

«Կոզետա» վէպի հայազգի հեղինակի մասին (Վիկտոր Հիւգոյի «ԹՇԻԱՌՆԵՐԸ» վէպի շարունակութիւնը)

ՌՈՒԲԻՆԱ ՕՀԱՆԵԱՆ

Եթէ ուզում էք իմանալ ինչպէ՞ս է շարունակւում ֆրանսիացի մեծանուն գրող Վիկտոր Հիւգոյի «ԹՇԻԱՌՆԵՐԸ» հանրայայտ վէպը, ապա դուք կարող էք կարդալ «Կոզետա»-ն (Cossete)[1], որի հեղինակը ամերիկահայ անգլիագիր ժամանակակից գրող ԼԱՈՒՐԱ ԷՆՆ ԿԱՊԼԱԿԵԱՆ-ն է: Առաջին անգամ հրատարակւել է 1995 թւականին, ԱՄՆ-ում:

Վէպի մասին ուրիշ տեղեկութիւններ չեմ գրում. թողնում եմ ընթերցողը դա գտնի ու կարդայ: Դէպքերը տեղի են ունենում Ֆրանսիայում, Նապոլէոն Բոնապարտի կայսրութեան տարիներին եւ յետոյ: Գրքի գրական մակարդակի մասին կարող եմ ասել, երբ որ աւարտեցի բնագրի ընթերցումը:

Իմ տեղեկութիւններով «Կոզետա»-ն հայերէն չի թարգմանւել: Պարսկերէն թարգմանութիւնը լոյս է տեսել Իրանում. թարգմանիչը տիկին Մարիամ Բայաթն է, որ վերջերս վախճանւեց Թեհրանում:

Ստորեւ բերում եմ հեղինակի համառօտ կենսագրականը եւ մինչ այս հրատարակած՝ նրա գրքերի անունը:

Այս տեղեկութիւնները գուցէ հետաքրքրեն ընթերցողների լայն շրջանակին:

Ռ. Օ.

Գրքի հեղինակ անգլիագիր ամերիկահայ գրող՝ ԼԱՈՒՐԱ ԷՆՆ ԿԱԼՊԱԿԵԱՆ

Ամերիկահայ անգլիագիր գրող Լաուրա Էնն Կալպակեանը ծնւել է 1945 թւականին, Կալիֆորնիայի Լոնգ Բիչ (Long Beach) քաղաքում: Նրա ծնողները մանուկ հասակում Պոլսից Միացեալ Նահանգներ են գաղթել: Լաուրա Կալպակեանն իր ստորագրութիւնից բացի ունի գրական անուններ. Ջուլիէտ Ջեքսոն (Juliet Jackson) եւ Կարեննա Ջէյն Գրէյ (Carenna Jane Graye): Նա մեծ ճանաչում ու համբաւ է ձեռք բերել յատկապէս իրրեւ յուշագրութիւնների հեղինակ: Ապրում եւ ստեղծագործում է Կալիֆորնիայում:

1967 թւականին աւարտել է Կալիֆորնիա համալսարանը (University of California, Riverside): Վկայւել է նաեւ Դելավերի համալսարանից: Կալիֆորնիա համալսարանի Սան Դիէգօ (San Diego) մասնաճիւղից վկայւել է գրականութեան ասպարէզում բանասիրական գիտութիւնների դոկտորի աստիճանով:

Լաուրա Կալպակեանը ֆինանսաւորում է ստացել Արուեստների Ազգային հիմնադրամից: Արժանացել է Pushcart մրցանակի եւ Խաղաղովկիանոսեան տարածաշրջանի հիւսիս-ամերիկեան հատուածի գրավաճառների ընկերութեան մրցանակին: Նա ստացել է առաջին «Անահիտ» մրցանակը[2], որը հիմնադրւել է հայազգի ամերիկացի գրողներին խրախուսելու համար:

Լաուրա Կալպակեան անունով հրատարակւած գործերն են.

«The Great Pretenders», «American Cookery», «The Memoir Club», «Educating Waverly», «The Delinquent Virgin», «Steps and Exes: a novel of family», «Caveat», «Cosette: the sequel to Les Misérables», «Graced Land», «Dark Continent and Other Stories», «Crescendo», «The Swallow Inheritance», «Fair Augusto and Other Stories», «These Latter Days», «Beggars and Choosers»:

Ջուլիէտ Ջեքսոն գրական անունով՝ «Belle Haven», Կարեննա Ջէյն Գրէյ գրական անունով՝ «Tiger Hill»:

«ԿՈԶԵՏԱ» հատորի կազմը

«ԿՈԶԵՏԱ», ուրիշ հրատարակութիւն

«ԿՈԶԵՏԱ», պարսկերէն թարգմանւած հատորի կազմը

---

1) Կոզետան վէպի գլխաւոր հերոս Ժան Վալժանի որդեգրած աղջկայ անունն է: Կոզետայի անունը պարսկերէն հրատարակութիւններով նշւում է «Կոզետ - Քոզէթ – کوزت»:

2) «Անահիտ» մրցանակը հիմնել է ամերիկահայ անգլիագիր գրող Ջեկ Անդրէասեանը (Jack Andreasian. 1920 - 2009)

Փարիզի Օլիմպիական խաղերը կունենան 35 մրցավայր

Փարիզում առաջիկայ ամռանը կայանալիք 33-րդ Օլիմպիական խաղերին կը ծառայի 35 մրցավայր: Դրանցից 14-ը գտնուում են օլիմպիական աւանից հեռու՝ 10 կմ. շառաւիղով:

Կառոյցների մեծ մասն արդէն պատրաստ է: Մրցումների մի մասը կանցկացուի Ֆրանսիայի մայրաքաղաքին յարող տարածքներում:

Ֆուտբոլի մրցաշարի հանդիպումները կը կայանան Բորդո, Նանտ, Լիոն, Սենտ Էտյեն, Նիս եւ Մարսէյլ քաղաքների մարզադաշտերում, սիորֆինգի ստուգատեսը՝ Թահիթի նահանգի Թեահուպու քաղաքում:

Armsport.am

Կայացել է Փարիզ-2024-ի Օլիմպիական աւանի բացումը

Փարիզի ամառային Օլիմպիական 33-րդ խաղերի մեկնարկից հինգ ամիս առաջ Ֆրանսիայի նախագահ Էմմանուէլ Մակրոնը Սեն Դենիում կատարել է Օլիմպիական աւանի բացումը:

Շինարարութիւնը տեւել է 7 տարի: Այդ հսկայ կառոյցը տեղաւորում է շուրջ 14500 մասնակիցների:

Արարողութեան ժամանակ կազմկոմիտէի ղեկավար Թոնի Էստանգէին յանձնուել է համալիրի խորհրդանշական բանալին:

Ֆրանսիայի նախագահը իր խօսքում նշել է, որ շինարարները կատարել են իրենց պարտաւորութիւնը, կառոյցը յանձնուել է ժամանակին եւ որակով:

Կազմկոմիտէն դեռ չորս ամիս ունի նախապատրաստական աշխատանքներն աւարտելու համար: Աւելի քան 300,000 կահոյք, դեկորացիա եւ տարբեր պիտոյքներ պէտք է տեղադրուի մինչեւ յուլիսի 18-ը՝ առաջին մարզիկների ժամանումը:

Գիւղը զբաղեցնում է 52 հեկտար տարածք, բաղկացած է 82 շէնքից, 3000 բնակարանից եւ 7200 սենեակից:

Աւանում կը գործի 24-ժամեայ ռեստորան՝ 3200 նստելատեղով, որը կառաջարկի վեց տարբեր խոհարարական ոճի սնունդ / իտալական, ասիական, ֆրանսիական եւ այլն /, ոչ ոգելից խմիչքների բար, հանգստի գօտի եւ ուսումնական տարածքներ:

Գիւղը կունենայ նաեւ մթերային խանութ, ոստիկանական բաժանմունք, գեղեցկութեան սրահ, ֆիթնես կենտրոն եւ փոստային բաժանմունք:

Տրանսպորտի խնդիրը կը լուծուի հեծանիւներով կամ էլեկտրական մեքենաներով, որոնք շուրջօրեայ աշխատանք կը կատարեն՝ խաղերը էկոլոգիապես մաքուր դարձնելու ՄՕԿ-ի պահանջին համապատասխան:

3000 մ. քառակուսի տարածքով կլինիկան 24 ժամ հասանելի կը լինի օլիմպիականներին՝ բժշկական օգնութեան համար:

Խաղերից յետոյ 2800 բնակարանների մէկ երրորդը կը վաճառուի մասնաւոր սեփականատէրերին, նոյնքանը կօգտագործուի որպէս սոցիալական բնակարաններ, իսկ մնացածը կը տրուի վարձակալութեան, այդ թւում՝ ուսանողներին:

Իւրաքանչիւր շէնք տարբերւում է միւսներից՝ ճակատի դիզայնի եւ գոյնի յստակ տատանումներով, ինչը հիմնականում եւրոպական է:

armsport.am

«Disney»-ն առաջին անգամ մուլտֆիլմի փոքր դրւագով անդրադարձել է հայկական մշակոյթին

«Mickey Mouse Funhouse» ֆիլմի փոքր դրւագում, որը ցուցադրուել է «Disney Channel»-ով, յայտնի Մինի Մաուսն ու իր ընկերները նշում են Վարդավառը:

Այս մասին հաղորդագրութիւն է հրապարակել «Armenianfilmsociety»-ի ինստագրամի պաշտօնական էջում:

Հաղորդագրութեան մէջ նշւում է, որ ֆիլմի սցենարի հեղինակը Քեթլին Սարնելի Կապուկչեանն է, որի ամուսինը հայ է:

«Այդ դրւագում Մինի Մաուսը սխալ հանդերձանք է կրում Վարդավառը տօնելու համար: Մինիին, Միկիին եւ նրանց ընկերներին ողջունում է Աստղիկ աստուածուհին, որը հայկական աւանդական տարազ է կրում: Աստուածուհին իջնում է իր կախարդական տաճարից եւ ջուր է շաղ տալիս նրանց վրայ»,-ասւում է նկարագրութեան մէջ:

Այդ իրադարձութիւնները տեղի են ունենում առասպէլների եւ լեգենդների երկրում, որը կառուցած է հայկական ճարտարապետութեան օրինակով, մասնաւորապէս՝ Գառնիի եւ Կասկադի հիման վրայ՝ ստեղծելով երկու վայրերի միաձուլում:

Աստղիկի կերպարը հնչիւնաւորել է Լիանա Բդեւին: Նրա մայրը հայուհի է, իսկ հայրը՝ լիբանանցի:

Դրւագը յագեցած է հայկական մշակութային տարրերով: Մինին հայկական տարազ է կրում, խօսում են հայերէն, իսկ սիրւած հերոսներ Չիփն ու Դէյլը թան են վաճառում, խորոված պատրաստում:

Մուլտֆիլմի այդ դրւագը միակն է, որով «Disney»-ն առաջին անգամ անդրադարձել է հայկական մշակոյթին:

Կարէն Խաչանովի ու Անդրէյ Ռուբլիովի բարեգործական խաղի հասոյթը կը տրամադրուի արցախահայութեանը

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարէն Խաչանովը եւ ռուս թենիսիստ Անդրէյ Ռուբլիովը բարեգործական խաղ կանցկացնեն, որի հասոյթը կը տրամադրուի արցախահայութեանը:

Բարեգործական խաղը կը կայանայ ԱՄՆ Լոս Անջելէս քաղաքում, մարտի 16-ին:

Կարէն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղիւսակում 15-րդն է: Նա 4 անգամ յաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքոյ անցկացւող մրցաշարում: Նա Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթէ մեդալակիր է:

Ինչո՞ւ...

(Շար. 3-րդ էջից)

կամ նոյնիսկ հանդուրժել այսօրւայ ապազգային իշխանութեանը՝ դաւաճան առաջնորդով հանդերձ: Գլխաւոր զէնքը, որով այդ ղեկավարութիւնը կարողացել է ծնկի բերել եւ իր կամքին ենթարկել, հայութեան մի զգալի հատւածի վախն է: 2020 թւականի ծրագրւած պարտութիւնից յետոյ ժողովրդի հաւանական ըմբոստացումը խեղդող զէնքը եղաւ իշխանութեան կողմից վախի ներշնչումը ժողովրդին: Այդ վախի զգացումն է ադրբէջանական զօրքի հարեւանութեամբ ապրող հայ մարդկանց ստիպում կրկին ձայն տալ գործող իշխանութեանը: Նրանց վախերի հիմքում արմատացած է իշխանութիւնների մոգոնած այն քարոզչական թեզը, թէ իշխանափոխութեան դէպքում ազգային ուժերը երկիրը կանգնեցնելու են պատերազմի առաջ: Իրականում հէնց իշխանութեան երկչոտութիւնը, երկիրը առաջւայ պէս պաշտպանունակ դարձնելու անկարողութիւնն է յանդգնութիւն ներշնչում հակառակորդին՝ բորբոքելով ուժի ճանապարհով Հայաստանին անվերջանալի զիջումներ պարտադրելու գայթակղութիւնը: Ուժային կառոյցներով սեփական անձը շրջապատած, ամբողջովին արտաքին ուժերին ապաւինող իշխանութիւնը չաւարտւած պատերազմի մէջ գտնւող ժողովրդի նկատմամբ կատարել է ամենաստոր բանը՝ ազգային ոգին բարձրացնելու, այդ ոգով երկրի վաղւայ օրը կանխորոշելու փոխարէն՝ ներարկել է վերջնիս թշնամու անյաղթելի լինելու զգացողութիւնը:

Վախի զգացումը երկրի ղեկավարի գլխաւոր զէնքն է, որին ապաւինելով եւ պատերազմի սպառնալիքը շահարկելով՝ նա առաջիկայում պէտք է փորձի լուծել Սահմանադրութեան փոփոխութեան եւ նոյնիսկ Հայաստանի այսօրւայ հանրապետութիւնը փաստացի տապալելու ծրագիրը: Վախի այս հիմնական զէնքով է, որ իշխանութիւնը փորձում է սեպ խրել ազգային ուժերի եւ ժողովրդի միջեւ: Միւս կողմից՝ իհարկէ, իշխանութիւնը միշտ անում է այն, ինչ ցանկանում է անել եւ ոչ թէ մտածում է մրցակիցների համար իրեն յաղթելու նպաստաւոր պայմաններ ստեղծելու մասին: Եթէ ազգային ուժերի ցայսօր իրականացրած գործունէութիւնը չի տւել ակնկալւող արդիւնքը, ուրեմն պէտք է մտածել այն վերանայելու մասին: Մեզանում մարդկանց յաւակնութիւններն ու ակընկալիքները յաճախ չեն համապատասխանում իրար, ազգային մեծ ու փոքր ուժերը իրենց գործունէութեան պլաքները պէտք է ուղղեն ոչ թէ ներս, այլ միայն դէպի դուրս, միմիայն դէպի ապազգային, կործանարար ռեժիմից երկիրն ազատագրելու նպատակը: Այս գերնպատակն է, որ պէտք է միաւորի բոլորին՝ վստահութեան եւ գործի կարեւորութեան գաղափարը տարածելով դէպի դուրս, դէպի հանրութեան լայն զանգւածներն ու տարբեր հատւածները:

Իհարկէ, ամբողջ ժողովուրդը յեղափոխութեան մասնակից չի կարող դառնալ: Պայքարը տարածելու ու խորացնելու համար անհրաժեշտ է հրապարակ դուրս գալ՝ ունենալով երկարատեւ գործունէութեան ճանապարհային քարտէզ՝ քայլ-քայլ գործողութիւնների մանրակրկիտ ծրագրով, այլապէս չպէտք է հերթական անգամ փորձութեան ենթարկել մարդկանց հաւատն ու համբերութիւնը: Երբ չկայ գործողութիւն, փակ են լինում բոլոր դռները, իսկ երբ պայքարը ծաւալւում է, ի յայտ են գալիս առաջ գնալու ուղիներ եւ ճեղքեր: Պայքարի անհրաժեշտութիւնն ու հրատապութիւնը թելադրւած են երկիրը կործանման տանող իշխանութիւնների հետեւողական քայլերով: Նիկոլ Փաշինեանն այսօր վստահ է, որ ներքին ընդդիմադրութիւնն իր համար վճռական խոչընդոտ չէ: Նա կատարում է արտաքին ուժերի, առաջին հերթին՝ թուրք-ադրբէջանցի թշնամիների բոլոր պահանջները, միայն թէ մնայ իշխանութեան ղեկին. իշխանութիւն կորցնելը նրա համար վերջ է նշանակում: Նիկոլ Փաշինեանը իշխանութեան է հասել՝ պայքարելով աւելի քան 10 տարի: Մենք 10 տարի ժամանակ չունենք, ինչպէս եւ ժամանակ չունենք սպասելու: Պայքարն այլընտրանք չունի, չպայքարելը՝ արդարացում:

«Դրօշակ» թիւ 2, 2024 թ.

Դէպի...

(Շար.3-րդ էջից)

Վաղը երեկոյեան, մեր թերթը պիտի նշէ իր 80-ամեայ երթի փայլուն ճանապարհը, «Զաւարեան» կենտրոնին մէջ կազմակերպւած հրապարակային ելոյթին ընթացքին:

Բոլորս միասնաբար, համախումբ եւ համատեղ կամքով վերանորոգենք մեր հաւատքը յունահայ մամուլի արժանաւորին՝ «Ազատ օր»-ին, միաժամանակ մեր յարգանքի տուրքը տալով «Նոր օր»-ի ու անոր երախտաւորներու վաստակին:

«Ազատ օր»-ը սոսկ լրատւական միջոց մը ըլլալու հանգամանքին մէջ չէ սահմանափակւած երբէք: Մեր թերթի դերը գաղութէն ներս իր անփոխարինելի նշանակութիւնը ունեցած է հայադրոշմ սերունդներու կազմաւորման, ազգային ու քաղաքական միտքի ձեւաւորման, հայրենի աշխարհը վառ պահելու, մեսրոպեան գիրի լոյսը սփռելու գործին մէջ:

Թանկագին այս ժառանգը եւ ապագայի տեսլականները թող առաջնորդեն մեր թերթի վերանորոգւած ուղին:

«Ազատ օր»-ի խմբագրական

Arfd.am

ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆՔ

Մի հեղինակաւոր արդիւնաբերական ընկերութիւն կարիք ունի.

- Հաշուապահութեան մասնագէտ
- Քիմիայի մասնագէտ
- Քարտուղարի, որը ծանօթ լինի վարչական աշխատանքներին

آگهی استخدام

یک شرکت معتبر تولیدی به افراد ذیل نیازمند است.

- کارشناس حسابداری
- کارشناس شیمی
- منشی جهت امور اداری

ارسال رزومه به واتس‌آپ: ۰۹۱۹۵۸۵۲۴۷۷

Computer AGMA

Համակարգչային ընկերութիւն

خرید و فروش کامپیوتر | سخت افزار
ارتقاء سیستم | نرم افزار
سرویس در محل | شبکه

Tel: 88849305 & 88842385

ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից, որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱԼԻՔ Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

مسافربری بین المللی

www.didarseir.ir
Email:info@didarseir.ir

دفتر مرکزی
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4

نمایندگی نارمک
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77281288 • 021-77821769 • 021-77259537 • 09366955599
واتساپ
اینستاگرام @Didarseiregity

دفتر ایروان
خیابان نالباندیان – شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237

دیدار سیر گیتی
DIDAR SEIR-E-GITY
Միջազգային ուղեւորափոխադրումների 27 տարւայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP հանրակառքով

Մէկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
Qeshm Air
هواپیمایی قشم ایر

نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر

شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن

Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝
դէպի Հայաստան եւ վերադարձ

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف

WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰

شرکت خدمات مسافرت هوایی و جهانگردی
7 هفت ستاره آسمان آفتابی
صدور بلیط خطوط هواپیمایی
کلیه خدمات گردشگری
رزرواسیون هتل ها

میدان ونک، خیابان گاندی جنوبی، کوچه بیست و سوم، پلاک ۱۹، ساختمان یاس، واحد ۲۰۱
۰۲۱-۸۸۷۹۶۷۴۲-۳ ۰۹۳۰۳۸۱۰۶۲۵

Խորտակւող....

(Շար. 2-րդ էջից)

Փաշինեանի մշտական գիծն է եղել եւ հիմա էլ նոյնը շարունակւում է: Էդմոնը սպասարկել է նիկոլական այդ գիծը: Այնպէս որ թող «կռուտիտներ» չանի, թէ բա՝ բան է փոխւել, տեսլականներս չի համընկնում: Բան չի՛ փոխւել:

«Ելքի» ռուբիկ-կուբիկը

Եւ այսպէս, Էդմոն Մարուքեանը դարձաւ բազմակիօրէն տարած ու յետ բերած «կլասիկ» յաճախորդ: Նախկին իշխանութիւնների օրօք նա նրանց յաճախորդն էր եւ «Ելք» դաշինքով մտցուեց խորհրդարան: 2018-ից յետոյ դարձաւ Նիկոլի յաճախորդը՝ մինչեւ այդ հասցնելով Նիկոլից բաժանւել (այդ փուլում Ալէն Սիմոնեանը Էդմոնին անւանում էր «քաղաքական տրեապկայ», իսկ Էդմոնը Ալէնին՝ «անբարոյականի վաստակ». սա այն եզակի դէպքերից էր, երբ որեւէ մէկի հետ իմաստ չունէր վիճելը, քանզի կողմերն իրար լաւ էին ճանաչում):

Հիմա Էդմոնը կրկին Նիկոլից բաժանւում է («Ելքի» երրորդ մասը՝ մասնագիտութեամբ Վազգէն Մարգսեանի եղբայր աշխատող Արամը, Նիկոլի հետ քիրւայութիւն է անում Երեւանի աւագանիում ու հաւատարմօրէն իրականացնում իր յաճախորդական ֆունկցիան Նիկոլի համար այնպէս, ինչպէս նախկին իշխանութիւնների մօտ էր իրականացնում): «Ելք» դաշինքը ռուբիկ-կուբիկի պէս պարբերաբար քանդւում-հաւաքւում է:

Թէ ինչու է Էդմոնը հիմա զգացել, որ տեսլականների տարբերութիւն ունի Նիկոլի հետ, դժւար է ասել: Մի մասի կարծիքով՝ «միամիտ լոռեցին» օդում որսացել է Նիկոլի խորտակւող նաւակի թեման ու փորձում է առնետաբար լքել այն: Միւս մասը կարծում է, որ Էդմոնին գործուղել են ընդդիմադիր դաշտ, որպէսզի քւէ փախցնի խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ: Երրորդներն էլ կարծում են, որ Նիկոլն է «պասլատ» արել «կլասիկ» Էդմոնին:

Մեծ հաշւով արդէն էական չէ, թէ Էդմոնի հեռացման պատճառը որն է: Պէտք է յստակ ֆիքսել, որ Էդմոնը, Նիկոլը, Արամիկը եւ միւսները նախկինից մնացած բալաստ են եւ պէտք է մերժւեն մեր հանրութեան կողմից: Մերժւեն ամբողջութեամբ ու վերջնականօրէն: Այլապէս այս թատրոնը սրտխառնոց է առաջացնում: Թատրոն, որի համար Արցախով վճարեցինք ու Հայաստանով կարող ենք վճարել:

Հայկ Ուսունց
7or.am

«Ուղիղ....

(Շար. 2-րդ էջից)

պաշտպանել սեփական քւէն փողոցային պայքարով:

Ի դէպ, քաղաքացիները կարծում են, որ ժողովրդավար դիտելու համար տեսալ երկրում պէտք է գոնէ մէկ անգամ ընտրութիւններով իշխանութիւն փոխւի: Այս տեսակէտից եւս նիկոլական Հայաստանը ժողովրդավար չէ, որովհետեւ նա եկել է իշխանութեան զաւթումով:

Ուզում եմ նաեւ ընդգծել. Հայաստանում 2018-ից յետոյ բոլոր ընտրութիւնների անցկացումը միֆ է, կեղծիք: 2018-ի ընտրութիւնները հրճւանքի ընտրութիւններ էին, 2021-ինը ցաւի: Իսկ հիմա ես տեսնում եմ, որ Նիկոլը հող է նախապատրաստում, որ գալիք ընտրութիւններն էլ լինեն վախի ընտրութիւններ: Մի կողմից նա երկրի ներսում է ստեղծում վախի մթնոլորտ՝ հետապնդելով եւ կալանաւորելով իր քաղաքական ընդդիմախօսներին: Միւս կողմից էլ նա խրախուսում է արտաքին սպառնալիքներից ներսում վախի մթնոլորտի ձեւաւորումը: Իր պատկերացումով հայ ժողովուրդը պիտի վախենայ Նիկոլից եւ Ալիեւից, որպէսզի ամրապնդի Փաշինեանի իշխանութիւնը»:

ԱԼԻՔ-ի Internet-ային էջն է՝ www.alikonline.ir

ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝

ԱՆՆԱ ՂԱՐԱԽԱՆԵԱՆԻ (ՂԱԶԱՐԵԱՆ)

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ ուրբաթ, մարտի 1-ին:

Թաղումը կը կատարուի երեքշաբթի, մարտի 5-ին, ժամը 13:00-ին, Նոր Բուրասպան գերեզմանատանը:

Յուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ առ. ժամը 11:00-ին ներկայ գտնուել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

ՀԱՍՑԷ՝

Դոկտ. Շարիաթի պող., չհասած Փիչչեմրանին, Իւնեսիզադէ փողոց, Մոզաֆարի փողոց, համար 2:

Յաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան սրահում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Ռուբէն եւ Լիղուշ Ղարախանեաններ՝ որդին եւ հարսը:

Ժորժիկ եւ Ժուլիէտ Ղարախանեաններ՝ որդին եւ հարսը:

Արբի եւ Քրիստինէ Ղարախանեաններ՝ թոռը եւ իր կինը:

Աթինէ եւ Շիրակ Աբդալեաններ՝ թոռնուհին եւ իր ամուսինը:

Էլիանոր Առաքելեան՝ քրոջ դուստրը:

Ազատ Նազարեան՝ ընտանեօք:

Գէորգ Կարապետեան՝ ընտանեօք:

Հիլդա Բաղդասարեան՝ ընտանեօք:

Ջեմմա Ղարախանեան՝ ընտանեօք:

Վերժիկ եւ Վարուժ Աւետիսեաններ՝ սանիկները՝ ընտանեօք:

Մարինա Մկրտչեան՝ ընտանեօք:

Ղարախանեան, Ղազարեան, Աբդալեան, Տէր-Մինասեան, Օհանեան, Բաղդասարեան եւ Ալլահվերդեան ընտանիքներ՝ խնամները եւ հարազատները:

ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք «Հայ կին» միութեան ժրաջան եւ պատասխանատու անդամուհի՝

ԱՆՆԱ ՂԱՐԱԽԱՆԵԱՆԻ (ՂԱԶԱՐԵԱՆ)

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ ուրբաթ, մարտի 1-ին:

Թաղումը կը կատարուի երեքշաբթի, մարտի 5-ին, ժամը 13:00-ին, Նոր Բուրասպան գերեզմանատանը:

«ՀԱՅ ԿԻՆ» ՄԻՈՒԹԻՒՆ

«Արարատ»

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

هواپیمایی ایران ایرتور IRAN AIRTOUR AIRLINES — هواپیمایی قشم Qeshm Air

برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

Մահապատժի է ենթարկուել «Մուսադ»-ին կապուած ահաբեկիչը

«ԱԼԻՔ» - Երէկ՝ մարտի 3-ին, մահապատժի է ենթարկուել իսրայէլական «Մուսադ» հետախուզական ծառայութեան ահաբեկիչ գործակալը, որը ծրագրել էր պայթեցնել Սպահանում Պաշտպանութեան նախարարութեանը պատկանող արհեստանոցային համալիրը: Տեղեկացնում է «Թասնիմ»-ը:

Տեւել ահաբեկիչ գործակալն այս տարուայ յունուարի 28-ին «Մուսադ»-ի հետախուզութեան սպայի ղեկավարութեամբ ծրագրել էր ռումբ պայթեցնել Սպահանում Պաշտպանութեան նախարարութեան համալիրում:

Այդ օրը, սիոնիստական ռեժիմի արբանեակների միջոցով առաջնորդուող 4 փոքրիկ թռչող սարքերը, որոնք Իրան էին ներմուծել ահաբեկիչ գործակալի միջոցով, փորձել են հարուածել Սպահանում Պաշտպանութեան նախարարութեանը պատկանող արհեստանոցային համալիրին: Դրանք, սակայն, հաւաստանշուել եւ ոչնչացուել են համալիրը պաշտպանող հակաօդային պաշտպանութեան համակարգի միջոցով:

Գործողութեան ձախողումից յետոյ, «Մուսադ»-ի այս գործակալը կեղծ ինքնութեամբ լքել է երկիրը, բայց 13 օր անց դատական համակարգմամբ, Իրանի յատուկ ծառայութիւնների աշխատակիցների միջոցով ձերբակալուել է հարեւան երկրներից մէկում եւ Իրան է վերադարձուել:

Բագրատ Սրբազան.

«Կորսուել է Արցախը, թափուել է մեր որդիների արիւնը, թշնամին օրակարգ է թելադրում»

«ՀայաՔուէ» նախաձեռնութիւնը Անկախութեան Հռչակագիրը չեղարկող իշխանական ձեռնարկման դէմ պայքարի իր օրակարգի շրջանակներում փետրուարի 29-ին անցկացրեց համաժողով՝ «Անկախութեան Հռչակագրի պաշտպանութեան հրամայականը եւ ազգային կենսունակ պետութեան տեսլականը» խորագրով:

Համաժողովի նպատակն էր մասնագիտական եւ քաղաքական գնահատականներ տալ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնը փոխելու, մասնաւորապէս, Սահմանադրութեան նախաբանից Անկախութեան Հռչակագրի վկայակոչումը հանելու իշխանական օրակարգին:

Համաժողովի նպատակն էր նաեւ նախանշել Հայաստանի գալիքի որոշ ուղենիշեր, երբ երկրում իշխանութիւնը կը լինի ազգային ու պրոֆեսիոնալ ուժերի ձեռքին:

«ՀայաՔուէ» նախաձեռնութիւնը ներկայացրել է հատուած՝ Տ. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանեանի խօսքից.

«Մենք ապրում ենք անպատուութեան, գողացուած ուրախութեան պայմաններում: Կորսուել է մեր հայրենիքի հրաշք անկիւնը՝ Արցախը, թափուել է մեր հազարաւոր որդիների արիւնը, թշնամու բանտում են Արցախի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը եւ մեր ժողովրդի զաւակները, թշնամին օրակարգ է թելադրում»,- նշել է Սրբազան Հայրը:

24News

Ադրբեջանը ձեւափոխում է Արցախ բանկի գլխամասային գրասենեակի շէնքը եւ թալանում Արցախի Աժ շէնքը

Հայքի մշակոյթի օմբուդսմէն, ադրբեջանագէտ Յովիկ Աւանէսովն ահազանգում է, որ Ադրբեջանը շարունակում է պետական մակարդակով ոչնչացնել եւ իւրացնել ոչ միայն բռնազաւթած Արցախի մշակութային ժառանգութիւնը այլ նաեւ պետական եւ մասնաւոր կառոյցների շէնքերը:

«Ադրբեջանական սոցցանցային հարթակներում հրապարակած հերթական տեսանիւթից երեւում է, որ ադրբեջանցի վանդալները ձեւափոխում են Արցախ բանկի գլխամասային գրասենեակի շէնքը եւ թալանում են Արցախի Ազգային ժողովի շէնքը»,- գրել է նա «Ֆէյսբուք»-եան էջում:

Լուսանկարները տրամադրել է Մխիթար Կարապետեանը:

yerevan.today

SET Coffee

فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117

0936-6726563
021-88305827
www.set-coffee.com

قهوه ست

املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

«Բաքուն....

(Շար. 1-ին էջից)

Ալբանիայի ԱԳ նախարարին Բաքու տեղափոխած ինքնաթիռը պատկանել է Ադրբեջանի Հ. ՁՈՒ-ին, ինչը կարող է վկայել այն մասին, որ Բաքուն պատրաստ է ամէն ինչ անել, որպէսզի «Մոնաֆեղին»-ի ահաբեկիչների մուտքը Բաքու անարգել ընթացքով շարունակի: Լուսանկարը հրապարակել է «Azariha» կայքը:

Յիշեցնենք, որ «Մոնաֆեղին» կազմակերպութեան ներկայիս շտաբը գտնուում է Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայի մերձակայքում, որից առգրաւած համակարգչային սերուերներից պարզ էր դարձել, որ 44-օրեայի պատերազմի ընթացքում պանթուրքիստական քարոզչամեքենայի գործակալները ղեկավարում կամ ուղղորդում էին հէնց Տիրանայից: Սերուերները Թեհրան էին տեղափոխել Իրանի բանեցրած ճնշումների արդիւնքում:

Ալբանիայի ԱԳ նախարարի Բաքու կատարած այցի ընթացքում երկու երկրները յայտարարել են քաղաքական, տնտեսական եւ հումանիտար ոլորտներում համագործակցութեան սերտացման, ինչպէս նաեւ կողմերի միջեւ վիզաների չեղարկման մասին:

Նոյն կապակցութեամբ, ռազմական հարցերով փորձագէտ Քարիմ Ջաֆարին գրառում հրապարակելով նշել է, որ Ալբանիան «Մոնաֆեղին»-ի բազան է, իսկ դրանով այդ ահաբեկչական վոհմակը հնարաւորութիւն է ստանում անարգել տեղափոխուել Բաքու՝ նպաստելու Ալիեւների հակաիրանական դաւադրութիւններին:

Փորձագէտը սուր քննադատութեան ենթարկելով իրանական կողմի լռութիւնը, յիշեցրել է, որ Բաքուն՝ երկրի ազգային շահերի մասին ոչ մի ընկալում չունեցող փահլաւիների ոտքը Կովկաս բացելուց յետոյ, արդէն անցել է յաջորդ քայլին, եւ փորձում է Արաքսից այն կողմ՝ Սադրամի տականքների («Մոնաֆեղին») առկայութեան համար ճանապարհ հարթել:

Այսպիսով, բացի Իսրայէլի որջ լինելուց, Բաքուն կը դառնայ նաեւ «Մոնաֆեղին»-ի թափթրփուկների որջը՝ Իրանի դէմ հիւսուող բոլոր դաւադրութիւնները կազմակերպելու համար: